Շրջակա միջավայրի նախարարության

Գլխավոր քարտուղար պարոն Ս. Աթանեսյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1. Քաղաքացիական ծառայողի/ծառայողների անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը**

Նարինե Հակոբյան (հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ, «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի (UNCCD) ազգային համակարգող):

**2. Գործուղման վայրը ժամկետները**

Լա Սերենա քաղաք, Չիլի, 2024 թվականի մարտի 16--ից 24-ը:

**3. Հրավիրող կողմը**

«Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի քարտուղարություն՝ Չիլիի շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ:

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի (UNCCD) Կողմերի համաժողովի 15-րդ նստաշրջանից (COP 15) հետո վերաձևավորվեց Երաշտի հարցերով միջկառավարական աշխատանքային խումբը (IWG on drought), որի նպատակն է բացահայտել և գնահատել գլոբալ քաղաքականության գործիքները, տարածաշրջանային քաղաքականության շրջանակները և ազգային պլանները՝ արդյունավետորեն կառավարելու երաշտը և աջակցելու երաշտի ռեակտիվ կառավարումից անցմանը պրոակտիվ կառավարման:

**5. Քննարկված թեմաները**

Երաշտի հարցերով աշխատանքային խումբը իր մանդատի շրջանակներում մշակում է երաշտի ազդեցություններին ուղղված քաղաքականություն և առաջադրում իրականացման միջոցառումներ՝ «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի շրջանակներում:

Հանդիպման ընթացքում աշխատանքային խմբի անդամների կողմից նախորդիվ հավաքագրված կարծիքների և առաջարկների հիման վրա լրամշակվեց հիմնական բաղադրիչներով (ֆինանսական տարբերակներ, տեխնիկական տարբերակներ, իրավականորեն պարտադիր տարբերակներ, ոչ իրավական պարտադիր տարբերակներ) քաղաքականության մոդելը:

Յուրաքանչյուր ենթախմբի համակարգողի կողմից ներկայացվեց մոդելի գնահատման սխեման՝ նախորդիվ ընդունված չափորոշիչներով և քննադատական հարցերով ինչպես նաև SWOT վերլուծությամբ:

**6. Հանդիպումները, ելույթները.**

Ելույթով հանդես եկան Չիլի շրջակա միջավայրի նախարարը, տարածքային մարմինների բնապահպանական հարցերով պատասխանատուն և կոնվենցիայի երաշտի հարցերով աշխատանքային խմբի նախագահողը: Ներկայացվեցին երաշտի հետ կապված քաղաքականության բացերը, խնդիրներն ու մարտահրավերները և առկա մոնիթորինգային տվյալներ՝ վերջին տարիներին ավելի հաճախակի գրանցված երաշտներով պայմանավորված վնասների մասով:

**7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Աշխատանքային խմբի կողմից որոշվել են հեռավար աշխատանքի հետագա քայլերը և ժամանակացույցը՝ մինչև հաջորդ հանդիպում, որը կկայանա հունիս ամսին՝ Սաուդյան Արաբիայում.

- ապրիլի 1-ին շաբաթ՝ հետագա առաջարկներ և լրացումներ խմբի անդամների կողմից ՝ նախնական առաջարկի վերաբերյալ, 2-րդ և 3-րդ շաբաթ՝ Գլոբալ աշխատանքային ծրագրի առաջին նախագծի ներկայացում, 4-րդ շաբաթ՝ աշխատանքային խմբի անդամների առաջարկներ առաջին նախագծի վերաբերյալ,
- մայիսի 1-ին շաբաթ՝ լրամշակված նախնական առաջարկի ներկայացում, 2-րդ շաբաթ՝ լրամշակված նախագծի SWOT անալիզի ներկայացում, մայիսի 20-ից հետո՝ ամբողջական լրամշակված նախագծի ներկայացում:

**8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Երաշտի հարցերով աշխատանքային խմբի հաջորդ հանդիպումը կկայանա 2024 թվականի հունիսի 1-3-ը, որի ընդացքում կմշակվի Գլոբալ աշխատանքային ծրագրի վերջնական տարբերակը: Կորոշվեն տարածաշրջանային հանդիպումների ձևաչափը և ժամկետները, որոնց ընդացքում վերջնական տարբերակը կներկայացվի կոնվենցիայի կողմ երկրներին, COP-16-ին ընդառաջ:

Գործուղվող՝ [signature] Նարինե Հակոբյան

25/03/2023 թ.